

դակցութիւններ ունենալուց յետոյ՝ սկսեց պատրաստութիւններ առևնելու օրվես զի առաջ ջիկաց գալնան նոր շինութեան հմար ղբուժ:

Սեպտ. 23-ին Գեր. Ապարժիա և պիտիոս պոսի ձեռքով ծայրադոյն վարդապետութեան աստիճան սատցաւ. 8. եղիշէ գ. Մուրադեան, որ կարգուած լինելով Արագածականի թեմի առաջնորդ, մեկնեց յետոյ գետի իւր պաշտօնաւելու:

Սեպտ. 24-ին Գեր. Ակոնդ և պիտիոսու կուսակրօն սարկաւադ ձեռնազբեց ու Դայխանի վանքում Աղքասնից Մուրադ Բէկանին, որ իւր ուսումն աւարտել է Ներսիսեան գպրանցում և ապա մի քանի տարի ուսուցիչ է եղել ծիր զպրոցներում, վերակացու Ներսիսեան զպրանցումն և Գեորգ Թովմանաղեանին, որ վերջին ապրին աւարտեց ուսումը Ա. Աթոսի ձեմարտնում և կարգուեցաւ նոյն ձեմարտնի անտես, կրօնի և թուարանութեան ուսուցիչ սատրին զասարաններում:

ՊԵՏՐՈՎ Վ.Ա.Պ.Պ.Պ. 0.3.0.9.Ե.0.6



Երկարաւուն հիւանդութիւնից յետոյ Ականչ յիսպում՝ իւր ծննդակայրում անցեալ օգոստոսին կնքեց իւր մաշիսնացուն Ա. Էջմիածնի միարան Պետրոս վարդապետը: Նա ծննդել է 1842 թուականին Ականչից առաջապատճեան հոգեոր զպրոցում և որպէս յառաջադէմ աշակերտ մրցանակ է ընդունել նոյն ժամանակ Վրաստանի և Խելքեթի առաջնորդ Կարնեցի Կարսական արքեպիսկոպոսի ձեռքից: 1858 թուականին ուրաք է սատցել իսկ 1870 թը ուականի նոյեմբեր 20-ին ձեռնազբուել է սարկաւադ: Յաջորդ տարուայ վետրուար ամսին Կանակարել է Գեղարդայ վանքում վանահօր օգնական և 2 ամիս յետոյ՝ ապրիլ 5-ին, կուսակրօն քահանաց ձեռնազբուել Վեհապետան Պետրոս և պիտիոսու ձեռքից: 1875 թուի նոյեմբերի 14-ին Ա. Ախոզի հրա-

մանով կարգուել է Մուզնոյ վանքի վանահայրը իսկ 1877 թուին այդ պաշտօնի հետ ստացել է և Աշտարակի ու իւր շրջակայրի բարեկարգչի պաշտօն, որը վարել է մինչև յուջորդ թուականի սեպտեմբեր ամիսը: 1878 թուականին Գ. Կամուղիկոսի հրամանով նշանակուել է նոր Նախիջևանի ու Խաչ վանքի վանահայր, 2 տարի յետոյ, 1880 թուին ստանձնել է և նոր Նախիջևանի հոգեոր կառավարութեան նախանդամութեան պաշտօնը: 1883-1884 վարել է Վաղարշապատի, Վարդարապատի իսկ նորանից յետոյ նոր Բայազեափի, Գեօրգայի և Դարաշիչակի գործակաւութեանցանց պաշտօնը: 1886 թուին կրկին անդամ վանահայր է կարգուել Մուզնոյ Ա. Գեորգայ վանքի: Յաջորդ տարին կարգուել է Արդրարի փոխանորդ: Այդ պաշտօնը վարել է մինչև 1891 թուականի յունիսի 14-ը, ապա կամաց հրամարուելով վերադարձել է Ա. Էջմիածնին և նոյեմբերի 12-ին ուղարկուել է Ակուլիս որպէս վանահայր Ա. Թովմայի վանքին:

1894 թուին Ա. Էջմիածնու Հայրապետի հրամանով կարգուել է Ախանջյանի և Ախալքալաքի վիճակների փոխանորդ, ուր մնացել է մինչև 1899 թուականը: Ապա վերադառնալով Ա. Էջմիածնին մարել է զանազան ժամանակաւոր պաշտօնները իւր անդուժելի հիւանդութիւնը զարմանելու համար նա գարնան Տիմուս և ապա բժիշկների խորհրդով, իւր ծննդավայրը զնաց, ուր և վրայ հասաւ անխուսափելի մահը: Հանդուցեալը իւր աշխատութեանց համար արժանացել է երկից վարձատրութեանց, Իւստրարիոյ թեմակալ առաջնորդ Տ. Մակար Արքեպիսկոպոսից ստացել է ծաղկեայ կերպառ, վիլսն, ապա նոյն հանդուցեալ Տ. Մակար Կամուղիկոսի հայրապետութեան օրերում արժանացել է վարդապետական ականակուռ լանջախաչի:

Հանդուցեալ Տ. Պ. զհողի պաշտօնելին ու նկեղեցւոյ ի լոյս երեսաց իւրոց:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՅՑ

Ակապումբերի 29-ին, ս. Գեորգ զօրավարի